ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1243 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱ-ԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 749-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 18-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՀՍԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ՀՍԿԱ» փակ բաժնետիրական ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 749-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում «1-5-րդ կետերի» բառերը փոխարինել «1-10-րդ կետերի» բառերով.

2) որոշման 2-րդ կետը «2303-180» թվերից հետո լրացնել «, 2406-752, 2406-754, 2406-753, 2406-751» թվերով.

3) որոշման հավելվածի ցանկը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-10-րդ կետերով.

«

6.	8701211019	Բեռնատար SINOTRUK HOWO MAX TRACTOR TRUCK 6x4 , Diesel	Քարշակ՝ առավել. զանգ. 25000 կգ, շարժ. հզոր 430 ձ.ու., առավելագ. արագութ. 100կմ/ժ, Չափ. 6985x2496x3060 մմ/	հատ	1	Չինաստան	Չինաստան	21 730 240	Լիզինգի գլխավոր պայմանագիր 2406-752
7.	8716310000	Cement Semi- Trailer 3 axles	Կցորդ՝ տարող. 45 խմ, առավել զանգ. 59700 կգ, Չափ. 11400x2500x3980 մմ	հատ	1	Չինաստան	Չինաստան	9 312 960	Լիզինգի գլխավոր պայմանագիր 2406-752
8.	8429519900	Շին. տեխնիկա Wheel Loader XCMG LW550FN (CHINA)	Կովշի ծավալը. 3 խմ, հզոր. 162 կվ, Սեփ. զանգ. 5300կգ Ընդ. զանգ. 17000կգ Չափ. 8075x3016x3515 մմ	հատ	1	Չինաստան	Չինաստան	22 118 280	Լիզինգի գլխավոր պայմանագիր 2406-754
9.	8704239209	Բեռնատար SINOTRUK HOWO TX 6x4 Dumper Truck	Առավել. զանգ. 35000 կգ, շարժ. հզոր 380 ձ.ու., առավելագ. արագութ. 85կմ/ժ, Չափ. 8200*2500*3300 մմ	հատ	10	Չինաստան	Չինաստան	190 139 600	Լիզինգի գլխավոր պայմանագիր 2406-753
10.	8705400001	Բեռնատար SINOTRUK HOWO TX 6x4 Mixer Truck	Շարժ. հզոր. 340 ձ.ու., Առավել. զանգ. 30000կգ, ստանդարտ կոմպլեկտ, բետոնախառնիչի ծավալ 10 խմ, առավելագ. արագութ. 100կմ/ժ, Չափ. 9300x2500x3950 մմ	հատ	6	Չինաստան	Չինաստան	128 053 200	Լիզինգի գլխավոր պայմանագիր 2406-751

».

4) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «776 526 000» թիվը փոխարինել «1 147 880 280» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ